ուղղեց նահատակված զոհերի յիշատակին: Հասարակութիւնը, որ խոնված էր սրահում, ջերմ վերաբերմունք ցոյց տուեց համագումարին: Բազմաթիւ կազմակերպութիւններ, հիմնարկութիւններ և գործիչներ դրաւոր ողջունել էին համագումարը:

Համագումարի աշխատանքները անցան համերաշխութեան մթնոլորտում. միայն քաղաքական բանաձևի շուրջ տեղի ունեցան բուռն վիճաբանութիւններ ու բախումներ: Եւ հէնց այդ հարցն էր կազմում համագումարի առանցքը: Բժ. Պոնապարթեանի զեկուցումից յետոյ երկարօրէն քննութեան առնուեցին առաջարկուած բանաձևի յատկապէս I, II և V կէտերը: Ցօղուած առ յօղուած քննելուց և մաս-մաս ընդունելուց յետոյ, ամբողջական բանաձևը երրորդ քէարկութեան դրուեց փետր. 12-ին և ընդունուեց միաձայնութեամբ ու ջերմ ծափահարութիւններով: Արևմտահայութեան քաղաքական կամքի ձևակերպումն էր այդ: Բանաձևն ասում է.

«Արևմտահայ Երկրորդ Համագումարը՝ քննելով հայ ժողովրդի ներկայ կացութիւնը՝

I. Սրտագին կողջունէ և կը յայտարարէ Ազատ և Միացեալ Հայաստանի անկախութիւնը:

II. Լիակատար վստահութիւն կը յայտնէ Ազատ և Միացեալ Հայաստանի Պօղոս Նուպար փաշայի անդրանիկ դահլիճին*):

III. Կը յայտարարէ իր վճռական որոշումն ու կամքը՝ ունենալ քաղաքական և պետական մէկ միութիւն համազգային հատուածներու և երկրամասերու միաւորութեամբ:

IV. Կը պարտադրէ ընտրուած «Գործադիր Մարմնին»՝ նախարարական դահլիճին հետ անմիջական յարաբերութեան մէջ մտնել՝ իրականացնելու և գործնականացնելու քաղաքական և պետական այն բոլոր աշխատանքները, որոնք հարկաւոր են Ազատ և Միացեալ Հայաստանի պետական գոյութիւնը հիմնաւորելու համար:

V. Միաժամանակ կը պարտադրէ ընտրուած Գործադիր Մարմնին՝ գործնական քայլեր առնել Արարատեան Հանրապետութեան նախարարութեան և Խորհրդարանի հետ Միացեալ Ազատ Հայաստանի անկախութիւնը յայտարարելու և իր մասնակցութիւնը բերելու գոյութիւն ունեցող պետական և օրէնսդրական հաստատութիւններու մէջ համազգային միութիւնը իրականացնելու համար:**)

VI. Կը պահանջէ Ազատ և Միացեալ Հայաստանի պետական գոյութեան երաշխաւորումը՝ դաշնակից պետութիւններու քաղաքական, տնտեսական և ռազմական օժանդակութեամբ և աջակցութեամբ:

---

*) Այդ օրերին Երևանում լուր էր շրջում, թէ Փարիզում Պօղոս Նուպարը յայտարարել է Հայաստանի անկախութիւնն ու միութիւնը և կազմել Միացեալ Հայաստանի կառավարութիւն:

**) Այս կէտին դէմ արտայայտուեցին ռամկավար 5 պատգամաւորները և պատճառաբանուած յայտարարութիւն ներկայացնելով՝ նիստից հեռացան: